



Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրասրահ Թորնթոն Ամյո ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Դ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton Amyot LLC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.gta.am

«Շեն-Կոնցեռն» Փակ Բաժնետիրական Ընկերության բաժնետերերին,

Մենք աուդիտի ենք ենթարկել «Շեն-Կոնցեռն» Փակ Բաժնետիրական Ընկերության (Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները ֆինանսական հաշվետվությունների Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ՝ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Հիմքեր՝ վերապահումով կարծիք արտահայտելու համար

Ինչպես նկարագրված է սույն հաշվետվություններին կից ծանոթագրություն 3.3-ում Ընկերության շենքերը ներկայացված են վերագնահատված արժեքով: Վերագնահատումն իրականացվել է 1999թ.: Համաձայն ՀՀՄ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտի, վերագնահատումները պետք է կատարվեն բավարար պարբերականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից: Չնայած անշարժ գույքի շուկայում առկա գների տատանմանը, Ընկերությունը չի իրականացրել վերագնահատված հիմնական միջոցների իրական արժեքի վերանայում 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Եթե Ընկերությունը իրականացներ վերագնահատում, ինչպես պահանջվում է ՀՀՄ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտով, ապա հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կարող էր էական բարձր լինել: Մենք չենք կարողացել ինքներս որոշել շենքերի իրական արժեքը 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Վերապահումով կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ այն ուղղումների ազդեցությունից, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե մենք կարողանայինք ինքներս համոզվել շենքերի իրական արժեքի հարցում, ֆինանսական հաշվետվությունները տալիս են 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների:

14 մայիսի, 2010թ.

Գագիկ Գյուլբուղադյան

Տնօրեն-բաժնետեր

Լիլիթ Արաբաջյան

Առաքելության բաժնետեր